

ԱԶԱՏԵԿ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Խաչատուր Սահակյան

Հեռախոս՝ +374. 93311740

Գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, Արփա գետի ձախ կողմում: Բնակավայրը շրջապատված է վեհ ու հիասքանչ լեռնաշղթաներով: Գտնվում է ծովի մակերևույթից 1625 մետր բարձրության վրա: Մարզկենտրոն Եղեգնաձորից 24 կմ հարավ-արևելք է, իսկ Վայք քաղաքից 7 կմ հեռավորության վրա, սահմանակից է Վայքի քաղաքին, Փոռ, Մարտիրոս, Զառիթափ, Խնձորուտ, Գնիշիկ, Ագարակաձոր և Զեդեա գյուղական բնակավայրերին: Ճանապարհորդների շրջանում հետաքրքրություն է առաջացրել Վայք-Ազատեկ ոլորապտույտ բարեկարգ ճանապարհը:

Հնագիտական հետազոտությունները և գյուղում պահպանված մշակութային արժեքների մնացորդները ենթադրել են տալիս, որ Ազատեկը հին Ազատ գյուղն է: Գյուղամիջի սուրբ Ստեփանոս եկեղեցու մուտքի ճակատաքարի արձանագրությունից երևում է, որ եկեղեցին կառուցվել է Ազատեկի գյուղական հասարակության կողմից, Հակոբ չորրորդ կաթողիկոսի ժամանակ, 17-րդ դարի 2- րդ կեսին և վերակառուցվել է Սալմաստից գաղթած հայերի կողմից 19-րդ դարի 30-ական թվականներին, լրացնելով քանդված ծածկը և պատերի վերին մասերը: Եկեղեցու պատերի և մույթերի մեջ օգտագործված են հին տապանաքարեր և խաչքարեր՝ արձանագրության մնացորդներով, որոնք բնորոշ են 13-14-րդ դարերին:

Ըստ Ամաղու-Նորավանքի մի արձանագրության տեղեկությունների՝ Սմբատ Օրբելյանն Ազատ գյուղն իր սահմաններով, շրջակա լեռներով ու դաշտերով նվիրել է Նորավանքին: Գյուղից երկու կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, ձորաբերանին գտնվում է Սուրբ Հակոբ ուխտատեղին, որի ներսում կա մի գերեզման: Համաձայն գերեզմանի տապանագրության՝ այն պատկանում է ոմն Հակոբի և թվագրված է 1607 թվական: Ենթադրվում է, որ այդ պատճառով էլ նրա վրա կառուցված մատուռ-ուխտատեղին կոչվում է Սուրբ Հակոբ: Մատուռից մի քանի քայլ դեպի հարավ-արևելք, սարալանջին կան երեք գերեզմաններ և հարակից մի փոքր քանդակազարդ խաչքար, որն ըստ տվյալների՝ կանգնեցրել են Գրիգորը և իր կինն իրենց որդու՝ Հունան քահանայի գերեզմանի վրա 1222 թվականին:

Գյուղից դեպի հարավ-արևելք գտնվում է Սուրբ Վառվառա բերդ-ամրոցը, որը թվագրվում է ք. ա. առաջին հազարամյակին: Ամրոցն ունեցել է մեծապես պաշտպանական նշանակություն:

Ազատեկ գյուղի տարածքում կան շատ մատուռներ, իրենց 13-14-րդ դարերին բոլոր խաչքարերով, որոնցից պատմամշակութային արժեք են ներկայացնում Սուրբ Գևորգ և Սուրբ Շողակաթ մատուռները: Նշված մատուռները տեղի բնակչության շրջանում հայտնի են հիվանդություններ բուժելու հատկություններով:

Իր յուրահատուկ և բարդ կառուցվածքով պատմամշակութային մեծ արժեք է ներկայացնում գյուղի կենտրոնում գտնվող աղբյուրը, որի շուրջն էլ 1828 թվականին Խոյից և Սալմաստից գաղթած հայերը հիմնել են գյուղը:

Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ: Նախկինում զբաղվել են նաև մետաքսագործությամբ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, վարչական շենք, բուժկետ, կենցաղ սպասական օբյեկտներ: Այն գազաֆիկացված է:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Ազատեկ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 13 հուշարձան: